

# «ՓՈՔՐ ԵՎ ԱՆԲԱՐԵՏԵՍ ԿԱՅԱՐԱՆ» ՆՇԱՆԱԿՈՂ ԲԱՌԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ (իմաստային-բառակազմական քննություն)

Ղ. Ս. ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Հայերենի բառաիմաստային խմբերի մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում կացարան նշանակող բառերը, որոնց համակողմանի քննությունը թե՛ լեզվաբանական, թե՛ պատմական-ազգագրական և նշակութային տեսանկյուններից որոշակի նշանակություն կարող է ունենալ:

Կացարանների անվանումների իմաստային դաշտը յուրահատուկ մի համակարգ է, որի ներսում միմյանց նկատմամբ իմաստային զանազան հարաբերություններ ունեցող ենթախմբեր կարելի է առանձնացնել: Դրանք ձևավորվում են իմաստային տարբեր հակադրությունների հիման վրա: Ինչպես՝ մարդկանց և կենդանիների, մեծ և փոքր, մշտական և ժամանակավոր, ընդհանուր և մասնավոր, բնական և արհեստական կացարաններ և այլն<sup>1</sup>:

Իբրև հակադրություն **ապարանք**, **պալատ**, **դոյակ** և նման բառերի՝ տարբերակում ենք իմաստային այսպիսի մի ենթախումբ՝ «փոքր և անբարետես կացարան» նշանակող բառեր:

Հին հայերենի կացարանահիշ այսպիսի բառերի շարքը բազմանդամ է: Արմատական կազմություններ են **խուղ**, **հիւղ**, **խրճիթ**, **տաղաւար** բառերը, որոնցից առաջին երկուսը հնդեվրոպական ծագում ունեն<sup>2</sup>, **խրճիթ**-ը ստուգաբանված է, իսկ **տաղաւար**-ը իրանյան փոխառություն է<sup>3</sup>: Բոլորն էլ վերագրվում են նախագրային հայերենին<sup>4</sup>:

Հայկազյան բառարանում **խուղ** և **հիւղ** բառերը բացատրվում են իբրև «շինականների և պարտիզպանների խրճիթ», **խրճիթ**-ը՝ «խուղ, աղքատի հարկ», **տաղաւար**-ը՝ «ոստերից, եղեգից և այլ թեթև նյութերից պատրաստված բնակարան, հյուղ»: Ավելի ուշ վկայված մի բան էլ կա՝ **թուփայ**, որ ըմբռնվում է իբրև «խուղ ի թփոյ»<sup>5</sup>:

Աեզ հետաքրքրող իմաստը գրեթե ամբողջությամբ դրսևորվում է **տնակ** ածանցավոր կազմության մեջ՝ «փոքրիկ և անշուք տուն. խուղ»:

Գրաբարյան բառաիմաստային այս խմբի մեջ պիտի ընդգրկել նաև **խուց** արմատական բառը, որն իր «փոքր սենյակ» հիմնական նշանակությունից զատ ունեցել է նաև «խրճիթ, խուղ, հյուղ» իմաստը:

Գրաբար հուշարձաններում չեն վկայվել (չկան նաև Հայկազյան, Արծեռն և Արմատական բառարաններում), սակայն ծագումով հնդեվրոպական և հին պիտի համարել **քողտիկ** (Շատախի բարբառում՝ **քոխթիկ**) և **քուլիկ** «այգիներում, սարերում շինված հյուղ» բառերը («հնդ. \*sqeu-/\*qeu- «ծածկել»)՝<sup>6</sup>: Սույն ծագումն ունի նաև հոմանիշ **թօխ** բառը (Կարնո բարբառ): Բառավերջի Դ-ի ն արտասանությունը կա, օրինակ, Մշո բարբառի որոշ խոսվածքներում, ինչպես՝ **ասեխ**, **տեխեր**, նման վկայություններ կան նաև ձեռագիր հիշատակարաններում (**աստխ**, **ասեխ**, **Մուշէխ**)<sup>7</sup>, ուստի սա **քողտիկ** և **քուլիկ** բառերի տարբերակային մի ձևը

<sup>1</sup> Տե՛ս Ղ. Գյուրջինյան, Կենդանիների պատասխան-կացարանների անվանումները, «Մայրենի» հանդես, 1992, ք. 3-4, էջ 12-13, **նույնի՝** Եկեղեցական-հոգևոր կյանքին: առնչվող կացարանների անվանումները, «Էջմիածին» հանդես, 1992, Ը, էջ 32-37:

<sup>2</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ 416:

<sup>3</sup> Տե՛ս Գ. Բ. Ջախուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 547:

<sup>4</sup> Տե՛ս անդ, էջ 400:

<sup>5</sup> Գ. Անտիպեան, Խ. Միրսէլեան, Մ. Ազգերեան, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 822:

<sup>6</sup> Պ. Քեղիքյան, Ստուգաբանություններ, ՊԲՀ, 1966, ք. 2, էջ 224-225:

<sup>7</sup> Հ. Դ. Մարտայան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Երևան, 1982, էջ 257:

պիտի համարել՝ բնիկ հայերեն բառ: Ստ. Մալխասյանցը, սակայն, թերևս անիրավացիորեն, այս և **քոխտիկ** բառերը կապում է պարսկերեն ՍՏ. «տնակ» բառի հետ<sup>8</sup>: Սեզ թվում է, որ պարսկերեն հիշյալ բառը հարկ է հիշատակել որպես ցեղակից արմատ միայն, այլ ոչ թե իբրև փոխառյալ մի ձև:

Նույն կերպ **հիւղ** բառի հետ է կապվում բարբառային **հուլիկ** «քողտիկ» բառը: Լ/Ղ լծորդության համար կարելի է համեմատել՝ **ջիղ-ջիւ, աղի-անալի, մղել-մլել** «մղել, հրել, խթել» (Մոկս, Վան) և այլն, իսկ **իւ > օ** ծայրդարձի համար՝ **ծիւն > բրբ. ծօն, ցօն, սիւն > բրբ. սօն, ծիւթ > բրբ. ծօթ**<sup>9</sup>:

Վերոհիշյալ բառերի իմաստների համեմատությունից կարելի է եզրակացնել, որ դրանք նշանակում են՝ ա) «փոքր տուն», բ) «աղբատի/կ/ տուն», գ) «շինականի և պարտիզպանի ժամանակավոր և անբարետես կացարան», մասամբ նաև՝ «սարում, այգիներում շինված տուն»:

Բառաիմաստային այս ենթախմբի բազմաթիվ միավորներ բարբառային են<sup>10</sup>: Այս բառերում իմաստային նրբերանգներ և հետաքրքրական այլ իրողություններ են դրսևորվում: Այսպես՝ **բ'ուճուճակ/պընճուճակ** «անշուք, անծուկ, խարխուլ հյուղակ» (Արարատյան բարբառ, Տավուշ). **բույն** արմատից՝ **-ուճակ** մասնիկով (հմնտ. **ասպուճակ** «մի տեսակ թռչուն»), **ծակուռ** «փոքր, նեղլիկ խրճիթ» (Ղարաբաղ, Գանձակ, Տավուշ, Մեղրի). **ծակ** արմատից՝ **-ուռ** ածանցով (հմնտ. **ակճուռ** «կոկոն, բողբոջ», **թակուռ** «թակիչ»), **օթավան** «այգում շինված փայտե տնակ» (Ղարաբաղի Մարտունու շրջան). մեր կարծիքով՝ առաջ է եկել **օթևան** բառի հնչյունափոխումից, **դափ/տեփ** «այգու մեջ կամ սարերում շինված հյուղակ» (Լոռի, Սյունիք, Ղարաբաղ). թերևս **դափ** բառից՝ նմանության հիման վրա, որովհետև այս կացարանը լինում է նաև շրջանածև, ինչպես նույնանուն նվագարանը. համեմատելի է նաև **դափ**, «կավի շերտ, որ թոնիրը շինող վարպետը դնում է նախկին շերտի վրա» բառի հետ (առկա է թե՛ նյութի և թե՛ ձևի ընդհանրություն): **խուլագ/խիւլակ** «հյուղակ, հովվի խրճիթ» (խտորոջուր, Ախալքալաք) բառերը թվում են հետ առնված փոխառություններ, որոնք ծագում են բնիկ հայերեն **խուղ** արմատից<sup>11</sup>:

Մի քանի բառի ծագումը թեև հստակ չէ, սակայն բառային և իմաստային զուգահեռներ կարող ենք անցկացնել: Այսպես՝ **մոզղոլ** «փոքր ու աղբատիկ խրճիթ» (Շիրակ). ունենք **մոզ** «փոքր» բաղադրիչը (հմնտ. **մոզ** «մի տեսակ ճանճ», **մոզի** «կովի երկու տարեկան հորթ», ջուրը **մոզ** արեց «մի փոքր խմեց»), **կունճ** «շատ փոքրիկ տուն» (Մեղրի). կարելի է համեմատել բարբառային **քունճի** «փոքր-մոքր մարդ», **գունճուլ** «մանր ու կլոր», **խըսասակ** «գյուղից դուրս շինված խրճիթ, աղբատի տուն» (Մուսալեռ). համեմատելի<sup>12</sup> է արդյոք **խուց** բառի հետ: **Բցուլակ** բառը Գր. Աճառյանը բացատրում է իբրև «ոչինչ խուցի պես ընեյակ»<sup>12</sup>, սակայն մեզ ծանոթ Տավուշի խոսվածքում այն նշանակում է «անտեսք, փոքրիկ, անպիտան տուն», այսինքն՝ անվանում է կացարանը և ոչ թե նրա մի մասը:

Բառաիմաստային այս ենթախմբի որոշ բառեր էլ ըստ երևույթին փոխառություններ են շրջակա արևելյան լեզուներից ու բարբառներից: Ի դեպ, դրանք հաճախ հայերենին անսովոր հնչյունական ձևավորում են ունենում, ինչպես՝ **պլուլոզ** «խեղճ տնակ, խրճիթ» (Վան), **դյւ-գյւ** «այգում սարում շինված տնակ» (արևել. տաճկ.)<sup>13</sup>, **կապր** «տնակ, խցիկ» (Սասուն), **կոկալ** «անշուք տնակ, հյուղակ» (Ղազախ): Ռուսերենից<sup>14</sup> է Շիրակի բարբառում գործածվող պարսկերեն ծագումով **բալագ/յան** «փայտաշեն կացարան գյուղից դուրս» բառը: Գրական ռուսերենում և հայերենում սա նշանակում է «փայտե թեթև կառուցվածք տոնավաճառում», «ժողովրդական թատերական տեսարան», «բեմական ցածր ու զռեհիկ ոճ»: Պարսկերենում

<sup>8</sup> Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1945, էջք 583, 597:

<sup>9</sup> Տե՛ս Հ. Գ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 192:

<sup>10</sup> Բարբառային բառերը հիմնականում քաղել ենք հետևյալ հրատարակություններից՝ Ս. Անատունի, Հայոց բառ ու քան, Վաղարշապատ, 1912, Հր. Աճառյան, Հայերեն գաղաղական բառարան, Թիֆլիս, 1913; Ռ. Մարկոսյան, Արարատյան բարբառ, Երևան, 1989, Էդ. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, Վ. Պետոսյան, Սասունի բարբառը, Երևան, 1954, Բ. Մեծունց, Շամշադին-Դիլիջանի խոսվածքը, Երևան, 1989:

<sup>11</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, և. Բ, էջ 417:

<sup>12</sup> Հր. Աճառյան, Հայերեն գաղաղական բառարան, էջ 1130:

<sup>13</sup> Մտ. Մալխասյանց, նշվ. աշխ., հ. 1, Երևան, 1944, էջ 481:

<sup>14</sup> Անդ, էջ 316:

**բալախանն** նշանակում է «վերնահարկ, վերնատուն»<sup>15</sup>, այսինքն՝ կացարանանիշ է:

Նկատելի է հետևյալ իրողությունը. գրաբարից ավանդված **խրճիթ** բառի իմաստը չի մասնավորում, տեղայնացնում այն կացարանը, որի նշանակիչն է: Այդպես չէ բարբառային վերոհիշյալ մի շարք բառերի դեպքում. լոռեցին, օրինակ, գյուղի մեջ գտնվող հյուղակին երբեք **դափ** չի ասի, չնայած որ սա՛ էլ է արտահայտում «խրճիթ, տնակ» հասկացությունը: Այսինքն՝ որոշակիացնող, տարբերակիչ դեր է կատարում այդ կացարանի՝ շենից դուրս կառուցված լինելու հանգամանքը, այդ իսկ պատճառով «հյուղակ» գաղափարին անհրաժեշտ է ավելացնել «այգիներում, սարերում շինված» լրացուցիչ տեղեկատվությունը:

Այդպես է նաև **հոլիկ** և **քոլիկ** բառերի պարագայում, սակայն սրանք երկրորդ նշանակությամբ կարող են արտահայտել առհասարակ «խրճիթ, տնակ» հասկացությունը՝ առանց կոնկրետ տեղայնացման և մասնավորման:

**Ծակուռ** և **կունճ** բառերում հատկապես զգալի է տան շատ փոքր, նեղլիկ լինելու նրբիմաստը:

Կացարան նշանակող բառերը հաճախ ունենում են նշանային պատճառայնության կամ նպատակի լրացուցիչ իմույթ, ինչպես օրինակ՝ **հյուղանոց** «հյուրեր ընդունելու համար նախատեսված շինություն՝ կացարան», **ծերանոց** «կացարան՝ ծերերին օթևանելու և խնամելու համար», արևմտ. **հանրատուն** «անառականոց» և այլն<sup>16</sup>: Իմաստային մասն հատկանիշ նկատելի է նաև քննարկվող բազմաթիվ բառերում: Այսպես՝ **հոլիկ** «փոքրիկ հյուղ, որ շինում են այգիներում և այլուր՝ պ ա հ ա պ ա մ ն ե թ ի, սարերում՝ ն ա խ ո թ ո ղ ն ե թ ի հ ա մ ա թ», **խուղ** «պ ա թ տ ի զ պ ա մ ն ե թ ի հ ա մ ա թ շինված տնակ» և այլն:

Որոշ բառեր էլ փոքրիկ, անշուք կացարան են նշանակում իմաստափոխության հետևանքով: Այսպես՝ բրբ. **ծղաղակ** նշանակում է «բարակ ճյուղերից հյուսված ծուղակ՝ թռչուն կամ ձուկ որսալու համար». նյութի և չափերի նմանության հիման վրա ձևավորվել է «փոքրիկ, խղճուկ տուն, խրճիթ» իմաստը: Բրբ. **պունճուլախ** «հետ ընկած անկյուն» (հմտ. **պունճախ** «անկյուն»), որ նշանակում է նաև «հյուղակ»: «Չորս կողմից փակ, խեղդուկ (սենյակ, տուն, տեղ)» է նշանակում **զուփ** բառը (Կարին, Պոլիս), որ ածական է, իսկ հնդեվրոպական քույր լեզուների մեջ սրա համարժեքը գոյական է (հմտ. հուն. γυπα «փոս, ապաստան, ուրուրի բույն», գերմ. Koben «խուղ, շան բույն, զոն»)<sup>17</sup>, ուստի հավանական է նույնպիսի արժեքով կամ փոխանվանական կիրառություն նաև հայերենի տարածքային տարբերակներում:

**Կոկալ** բառն ունի «խրճիթ, քողտիկ» և «արևից զուրկ՝ ստվերոտ տեղ» նշանակությունները, որոնցից վերջինն է մեզ մախնական թվում: Առաջնային պետք է դիտել բնականը՝ «ստվերոտ տեղ», ապա արհեստականը՝ շինությունը: Իմաստի զարգացման համար համեմատության եզր կարելի է դարձնել **սոր/ք/**, **փչակ**, **ծակ** և նման այլ բառեր, որոնք լինելով տեղանիշ գոյականներ՝ ժամանակի ընթացքում սկսել են գործածվել նաև «կենդանիների բույն» նշանակությամբ:

Ի դեպ, կենդանիների պատսպարան-կացարան նշանակող որոշ բառեր փոխաբերաբար և արհամարհական երանգով նշանակում են «փոքր և անբարետես տուն», ինչպես՝ **բույն** և **հավաբույն** «խղճուկ, անձուկ տուն՝ հյուղակ», **զոն** «անբարետես՝ զոնածև տուն՝ սենյակ» (բայց ո՛չ փոքրիկ), **խլրղաբույն** «նեղ ու ցածրիկ խրճիթ»: Հակառակ երևույթը կարելի է մատնանշել թերևս միայն մեկ դեպքում. **խուղ** «ստորգետնյա բույն». «Կ'ահաբեկին խլուրդներ իրենց խուղին մէջ մթին» (Գ. Վարուժան):

Բարբառային որոշ բառերում «փոքր» և «անբարետես» իմաստներին զուգադրվում, երբեմն նաև տիրապետող են դառնում «խարխուլ», «քանդված» լրացուցիչ իմաստները: Այսպես՝ **քոնճախ** «քողտիկ» և «քարուքանդ եղած՝ անշուք տուն», որտեղ որոշակիորեն անարգական վերաբերմունք է դրսևորված (հմտ. բրբ. **ք/ո/նճոտ** «ողորմելի»): Այդպես էլ **քանճախ**, որ գործածվում է հատկապես արհամարհական երանգավորումով կամ էլ անեծքներում; **խարաբա** (արաբերենից) «քանդված տուն», **խղլխղլա** «խարխուլ՝ փլվելու ենթակա տուն՝ շինվածք», **բլբլակ**, **բլբլօզ** (Լոռու խոսվածք, Մեծ Պարմի) «անբարետես, խարխուլ

<sup>15</sup> Գ. Նալբանդյան, Պարսկերեն-հայերեն բառարան, Երևան, 1987:

<sup>16</sup> Տե՛ս Դ. Գյուրջինյան, Կացարաններն ըստ նպատակի, «Մայրենի», 1993, թ. 4-6, էջ 40-41:

<sup>17</sup> Գ. Բ. Չախուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 318:

տուն», որի **բօզ** «գոմ» փոխառյալ բաղադրիչը մատնանշում է կացարանի ինչպիսի լինելը: **Բրիչակ** բառը նշանակում է ուղղակի «ավերակ»՝ արհամարհաբար երբեմն արտահայտելով նաև կացարանի իմաստ:

Իմաստային այս խմբի մեջ մտնող բառերի զգալի մասը ժամանակավոր կացարանների անվանումներ են (**հողիկ, դափ, բինա, օթավան**...): Մի շարք բառերում, սակայն, իմաստային նման կոդը չի դրսևորվում, օրինակ՝ **խրճիթ, ծակուռ, քցուլակ, հյուղակ** և այլն:

Հետաքրքրական առնչություններ են նկատվում «հյուղ» և «վրան» նշանակող բառերի միջև:

Գրաբարյան շրջանում **տաղավար** նշանակում էր թե՛ «հյուղ», թե՛ «վրան»: **Խուղ**-ը Հայկազյան բառարանում բացատրվում է նաև իբրև «տաղավար», ըստ Մալխասյանցի բառարանի՝ երկրորդ նշանակությամբ վրան, տաղավար է: Իմաստային այս աղերսները համենայն դեպս պատահական չեն, քանզի հյուղը և վրանը, միմյանցից որոշակիորեն տարբերվելով, այնուամենայնիվ, մի քանի ընդհանուր հատկանիշներ ունեն: Դրանք են՝ ա) երկուսն էլ մարդու կացարան են, բ) մեծ մասամբ ժամանակավոր բնույթ ունեն, գ) թեթև պատրաստվող են, դ) հիմնականում փոքր չափեր ունեն, անշուք են: Այս առումով ասվածի լրացում կլինի **խորան** բառի իմաստը՝ «վրան. տաղավար՝ կառուցեալ ի բացի որպես խ ու ղ կամ տ ու ն շ ա ռ ժ ա կ ա ն» (ըստ Հայկազյան բառարանի):

Հարկ է նշել, որ իմաստային այսպիսի աղերսներ նկատվում են նաև որոշ բարբառային բառերում: Այսպես՝ **բինա/բընա** փոխառյալ բառը նշանակում է «ամառային բնակավայր», «սարերում նախրապանի համար կառուցված տնակ» և «վրան»: Նույն ձևով՝ **օթա**՝ «ժամանակավոր բնակավայր՝ շինությունների ամբողջություն», «տուն, տնակ» և «վրան»: Այս վերջին իմաստները կան նաև փոխատու թյուրքական լեզուներում և բարբառներում<sup>18</sup>:

Նկատել ենք նաև հակառակ երևույթը՝ **յուղ** «վրան», իսկ հայերենի մի խոսվածքում (Եղվարդ)՝ նաև «եղեգնաշեն հյուղ» և այլն:

Կացարանների անվանումները, բացի տեղի կարգի հետ կապված իմույթներից, կրում են կազմի, թվի, կախման, ձևի, չափի, դասի, նշանային պատճառայնության (նպատակի) և այլ կարգերի առնչվող լրացուցիչ իմույթներ<sup>19</sup>: Անդրադառնանք դրանցից մեկ-երկուսին: Եթե, օրինակ, կացարանանիշ շատ բառեր հակադրվում են «ամբողջ» և «մաս» եզրերով, ինչպես՝ **տուն - սենյակ, պալատ - դահլիճ**, ապա հետազոտվող բազմաթիվ բառերի սա բնորոշ չէ. դրանք միակազմ են (հմտ. **դափ, օթավան, հողիկ**):

Մինչ այժմ ներկայացված բառիմաստներն արդեն որոշակի գաղափար են տալիս հիշյալ կացարանները կառուցելու համար անհրաժեշտ նյութերի (կազմի կարգ) մասին: Նյութերի անվանումներից են՝ **փայտ, եղեգն, ոստ, ծեփ, ցից, գերան, տախտակ, կղմինդր, ծղոտ, շաղախ, կավ, քար** և այլն: Գործիքների անվանումներից (կախման կարգ)՝ **կացին, ուրագ, սղոց, դուր, մուրճ** և այլն:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե հայերենի պատմական զարգացման ընթացքում «փոքր և անբարետես տուն» նշանակող բառերն իմաստային ինչպիսի փոփոխություններ են կրել: Այսպես, **խուղ**-ն ունի նաև «քարից փոքրիկ շենք, որի մեջ կաթնեղեն (մածուն, պանիր և այլն) են պատրաստում» իմաստը, այսինքն՝ կացարան չի նշանակում (ի դեպ, Սասունի բարբառում կա նույնանիշ **խղտուն** բառը): Սրա պես ունենք **քողտիկ** «խրճիթ» և «մառան»: **խրճիթ** բառի «աղքատիկ տուն» նշանակությունը ժամանակակից հայերենում կոնկրետացել է՝ հատկապես «գ յ ու ղ ա կ ա ն հասարակ տուն, փոքր տուն, հյուղ»:

**Տաղավար** բառն արդի հայերենում կացարանի իմաստով առհասարակ չի գործածվում, մի բան, որ բառիմաստային այս ենթախմբի մեջ հազվադեպ է. այս տեսանկյունից համենմատելի է **խորան** բառի հետ: Հարկ է նշել, սակայն, որ **տաղավար** բառի դեպքում գործ ունենք ոչ միայն իմաստային զարգացման, այլև պատճենման հետ. եսկան դեր են խաղացել ֆրանսերեն pavillon (> .ռուս. павильон) և մասամբ էլ ռուսերեն беседка բառերը: Թե՛ արևելահայերենի, թե՛ արևմտահայերենի համար այս բառի իմաստները գրեթե նույնական են՝

<sup>18</sup> Տե՛ս Յ. Բ. Севортян, Этимологический словарь тюркских языков, т. 1, Москва, 1974, էջ 400:

<sup>19</sup> Տե՛ս Գ. Բ. Ջառուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989, էջ 146:

«թեթև շինություն խաղերի, առևտրի, հանդեսների համար», «ցուցադրման հատուկ շենք՝ սրահ», «պատշոնատների մուտքերի մոտ առանձնացված տեղ պահապանների համար» և արևել. «կենցաղային սպասարկման փոքրիկ արհեստանոց»: Նկատելի է, որ **տաղավար**-ը գործածվում է տարբեր՝ **թ ե թ և**, **փ ո ք ը ի կ**, **ժ ա մ ա ն կ ա վ ո Ր** շինություններ անվանելու համար, մի իրողություն, որ հարագատ է բառի նախնական նշանակությանը:

**խուց**-ն արդի հայերենում այլևս «տնակ, հյուղ» չի նշանակում, այլ տարբեր կացարանների մաս միայն. հմմտ. **վանք - խուց** «կրոնավորի փոքրիկ սենյակ, ճգնարան», **բանտ - խուց** «բանտախուց», «պատժախուց», «մենախուց»: Սրանից դուրս է **խուց**-ի «անշուք սենյակ կամ տուն» փոխաբերական իմաստը:

Բառակազմական տեսանկյունից այս բառերը մեծ մասամբ պարզ են (**հյուղ, խուղ, տաղավար, խրճիթ, դափ, բինա, դնգն, քոխ** և այլն), մի մասն ածանցավոր է (**տնակ, տոնիկ «հոլիկ» (Վան), քողտիկ, հյուղակ, ծակուռ, հոլիկ, բունուճակ** և այլն), ընդ որում գործածական են նվազական ածանցները: Մեկ-երկուսն են միայն բարդ և բարդ ածանցավոր **կալտուն** «կալերի մոտ կառուցված տնակ» (Սասուն), **բնբնակ**:

Բառակազմական փնջեր են կազմում միայն դասական շրջանից վկայված բառերը, սակայն բառակազմական կենսունակության առումով դրանք զգալապես գիջում են կացարանանիշ **տուն, վանք/խուց** բառերին: Համեմատության համար հիշենք, օրինակ, որ հայերենի տարբեր փուլերում միայն **տուն** վերջնաբաղադրիչով կազմվել է շուրջ 400 բառ (ըստ մեր քարտարանի վերջին տվյալների)<sup>20</sup>:

Պատկերըն այսպիսին է: **խուղ - խղատեղի, խղափակ, խղտուն, խղուվոր** «խուղերով ապրող, յայլա գնացող», **խղիկ/խղակ, խղաբնակ, հյուղ - հյուղակ/հյուղիկ, հյուղախորշ, հյուղական, խրճիթ - խրճիթային, խրճիթաձև, խրճիթ/ավար, խրճիթ-ընթերցարան** (այս երկուսն ստեղծվեցին մեր դարի 20-30-ական թվականներին, իսկ այժմ հնացած են), **խրճիթ-քարանձավ** (հազվադեպ և անհաջող մի կազմություն): Բառակազմորեն փոքր-ինչ կենսունակ է թվում **տաղավար բառը. տաղավարաբնակ, տաղավարիկ/տաղավարակ, տաղավարակից, տաղավարային, տաղավարական, տաղավարել, տաղավարաշինություն, տաղավարահարք, տաղավարահարություն**: Այստեղ, անտարակույս, որոշակի դեր է կատարում բառի բազմիմաստությունը. հմմտ. **տաղավար «հինգ ավազ տոներից յուրաքանչյուրը» - տաղավարական «այդ տոնին հատուկ»**:

Հետագուտվող մյուս բառերը բառակազմական արժեքից զուրկ են:

Անհրաժեշտ է նշել, որ չեն բացառվում դիպվածային կազմությունները, ինչպես՝ **քողտիկանման, հոլիկաձև** (հմմտ. բառարանային գրանցում ունեցող **խրճիթաձև**) և այլն:

Պարզենք, թե հայերենի բառային կազմի մեջ ինչպիսի տեղ ունեն «փոքր և անբարետես տուն» նշանակող բառերը:

Հայոց լեզվի զարգացման ողջ ընթացքում գրական են դիտվել **հիւղ, խուղ, խրճիթ, տաղավար** բառերը: Սրանք հավասարապես գործածական են թե՛ արևելահայերենում, թե՛ արևմտահայերենում: Մյուս բառերը բարբառային են, մի քանիսը՝ նույնիսկ նեղ բարբառային (կամ օտարաբանություն): Բարբառայնություններից գրական լեզվի շրջանակներն է ընդգրկվել թերևս միայն **քողտիկ** բառը. այն նույնիսկ հատուկ ուսուցանվում է հայրենի դպրոցներում՝ իբրև ուղղագրական դժվարություն ունեցող մի բառ, **խրճիթ** բառի հոմանշային շարքի եզր: Այսպես՝ Ջառ Մամբաշի ծաղկոտ լանջին Պստիկ **քողտիկդ** է կանգնած (Ավ. Իսահակյան): Համարակալվեց մի ամբողջ երկիր՝ իր քաղաքներով, շեներով ամեն և մինչև անգամ վերջին **քողտիկով** (Պ. Սևակ):

Իսկ մյուս բառերի՝ գեղարվեստական գրականության էջերում այս կամ այն կիրառությունը դեռևս չի նշանակում, թե դրանք բարձրացել են գրականի աստիճանին: Օրինակներ Գիշերվա մի ժամին դուրս եկա **դափի** դուռը (Հովհ. Թումանյան): Կանաչ դաշտի պարզ **հոլիկը** շահի ոսկի քոշքից լավ է (Ավ. Իսահակյան): Ռ՞վ է շինել հողե **քոլիկ** Քեռուս երագ բոստանում (Ս. Ջարյան): Չանցած ևս մեկ-երկու ժամ Տեղավորվում Սա՛ **հոլիկում**, նա վրանում... (Պ. Սևակ):

Արձանագրենք նաև, որ գրական աշխարհաբարի երկու տարբերակները «անբարետես

<sup>20</sup> Հմմտ. **Դ. Գյուրջինյան**, «Տուն» վերջնաբաղադրիչով բարդությունները, ՊԲՀ, 1991, թ. 2, էջ 153-162:

և փոքր տուն» նշանակությամբ յուրահատուկ, միայն մեկին բնորոշ բառեր չունեն, այնինչ բառաիմաստային մյուս ենթախմբերում այդպես չէ. հմմտ. արևել. **ծննդատուն, հյուրանոց, անառականոց** և արևմտ. **մայրանոց, պանդոկ, հանրատուն**: Միակ բացառությունը թերևս արևելահայերենում գործածվող բարաբ «փայտից, քիթեղից շինված կացարան» փոխառյալ բառն է (ռուսերենից): Մյուս տարբերությունները, բնականաբար, նկատելի են միայն բարբառային մակարդակում:

**Д. С. ГЮРДЖИНЯН** - Слова, обозначающие "небольшое и неприглядное жилище" в армянском языке (семантико-словообразовательное исследование).- В статье рассматриваются единицы семантической подгруппы "небольшое и невзрачное жилище", в которую входят древнеармянские и диалектные слова, а также ряд заимствований. Выявляются лексико-семантические особенности и словообразовательная значимость этих слов.